

ծածութիւնը (Օձն. 25). եւ Տարօնացին՝
 Հոովմայ եկեղեցիէն ընդունած կը համարի
 (Թէոփ. 306): Իսկ որովհետեւ պատմա-
 կան մթութեանց մէջ մեր Հարց հրեա-
 կայութիւնը սահման չունի, Կիրակոս կը
 կարծէ՝ թէ Գրիգոր ու Սեղբեստրոս «աղ
 օրհնեցին» ի Հոովմ, եւ խառնեցին խա-
 շանց զենման մէջ (7). զոր Որբեւեանն
 ալ կ'ընդունի, համարելով զանոնք նո-
 րոգիչ նոյն օրհնութեան, եւ զՅակոբոս
 տեառնեղբայրն՝ առաջին հիմնադիր (Հկճ.
 Ժ): Տաթեւացին տեղ մը Լուսաւորչին
 կ'երեւակայէ աղին հաստատութիւնը, եւ
 ուրիշ տեղ մը՝ Երուսաղեմի Յուստոս ե-
 պիսկոպոսին (Հրց. 657, '58-9). նշան՝
 թէ ինքն ալ ապահով չէր ըսածին: Սա-
 կայն աւելի դրականն է անոր գոյութիւնը
 մեր մէջ Ը դարուն, — չհաշուելով Խո-
 րենացւոյն ընծայուած ճառն՝ որոյ թուա-
 կանն անատոյգ է, — ուր Օձնեցին կը պա-
 տուիրէ «զազն օրհնութեան յագապացն
 զենմունս խառնել» (25):

Շնորհալին աղին խորհուրդն ալ կը
 բացատրէ հետեւեալ կերպով: Աղը, կ'ըսէ,
 «մաքրութեան օրինակ» է, ինչպէս Քրիս-
 տոս աշակերտաց ըսաւ՝ թէ «Դուք էք աղ
 երկրի»: Նախամարդոյն մեղօք երկիրս ա-
 նիծուելով, անոր վրայ գտուածներն ալ